


ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՈՒԱՆ ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ

Posted on October 17, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Forty years ago, in October 1973, a secret group calling itself "Khmpag" was established in Yerevan, Armenia by a handful of Diaspora students studying in the homeland. By 1980, when it had gained considerable prestige and experience within the student body, "Khmpag" created a front-line legal entity named after the "Father of Armenian Historians" Movses Khorenatsi. Keghart.com will reflect on "Khmpag"s activities in the future. Editor



Մովսես Խորենացու անուան պատմաբանասիրական խմբակի անունից ողջունում ենք ձեզ, եւ մաղթում որ նորաստեղծ խմբակը զարգանալով, իր պարտականութիւնները լիովին կը կատարի, մշակութային աշխատանք տանելով հայրենիքում սովորող սփիւռքահայ ուսանողների շրջանում, մեր բոլորիս աջակցութեամբ:

Forty years ago, in October 1973, a secret group calling itself "Khmpag" was established in Yerevan, Armenia by a handful of Diaspora students studying in the homeland. By 1980, when it had gained considerable prestige and experience within the student body, "Khmpag" created a front-line legal entity named after the "Father of Armenian Historians" Movses Khorenatsi. Keghart.com will reflect on "Khmpag"s activities in the future. Editor



Մովսես Խորենացու անուան պատմաբանասիրական խմբակի անունից ողջունում ենք ձեզ, եւ մաղթում որ նորաստեղծ խմբակը զարգանալով, իր պարտականութիւնները լիովին կը կատարի, մշակութային աշխատանք տանելով հայրենիքում սովորող սփիւռքահայ ուսանողների շրջանում, մեր բոլորիս աջակցութեամբ:

Լինելով այն սերունդի ներկայացուցիչները, որոնք ծնունել են հեռու հայրենի հողից եւ հայրենիք են եկել բարձրագոյն ուսում ստանալու, մենք անբաժան մասն ենք հայ ժողովրդի այն երիտասարդութեան, որը այսօր ամեն ճիգ անում է մեր ժողովրդի մի ստուար մասին հայ պահելու եւ մայրենի հողին մօտեցնելու, աշխարհի չորս ծագերում: Մեր սերունդը սփիւռքում ժառանգորդն է հակասութիւններով լի մի աւանդութեան: Մենք ծնունդ ենք այն օրերի, երբ եղբայրասպան կռիւներով էին յատկանշուում հայկական գաղթօճախների մի մասը, այլամերժութիւնն ու նեղմտութիւնը եղել էին չափանիշ հասարակական գործունեութեան: Միաժամանակ լինելով ազգութեամբ հայ եւ օտար քաղաքացի, ենթարկուում ենք երկբեղկման:

Պարզ է որ այդ յեղձուցիչ ներքին մթնոլորտը, գաղթօճախները շրջապատող տեղական եւ միջազգային անցուդարձերը անդրադառնում են մեր վրայ, ստեղծելով յոռետեսութեան, ոչնչապաշտութեան, անիշխանութեան ձգտումներ: Չարգանում է մեր

մեջ աշխարհաքաղաքացիութիւնը (քոզմոփոլիթիզմը):

Դիպուկ է ասուած Վարդգէս Համազասպեանի խօսքերը, որը ասել է սփիւռքահայութեան ներկայացուցիչների ժողովին "... չի կարելի չնկատել այն տարածայնութիւնները, խմորումները, որ առկայ են քաղաքական կուսակցութիւնների ներսում, այն խուլ, երբեմն բացայայտ պայքարը, որ յաճախ թաքթիքական ու ծրագրային հարցերում առաջանում են յատկապէս հին ու նոր սերունդների ներկայացուցիչների միջեւ:

«Բոլորովին նոր երեւոյթ է նաեւ այն, որ սփիւռքում ակտիւ գործունեութիւն են ծաւալել առանձին խմբեր, կազմակերպութիւններ... որոշ տարածում են գտել նաեւ անարխիստական, արկածայնութեան տեսութիւնների, որոնք յաճախ նպաստաւոր հող են գտնում նոր ազգային զարթօնք ապրող երիտասարդութեան առանձին շրջաններում»: ("Հայրենիքի Ձայն" 28 Նոյ, 1980, թիւ 48 (800):

Բայց սփիւռքահայ երիտասարդութեան մի որոշ մասը գիտակցելով այս բոլոր երեւոյթներին, պրպտութեան մեջ է ամէն տեղ: Մշակոյթային աշխատանքի շուրջ վերարժեւորումներ են կատարուում, համաձայնութիւնների գալով սրբագրուում են որոշ թերութիւններ:

Այսույանդերձ սփիւռքահայ երիտասարդութիւնը միայնակ այդ առաքելութիւնը չի կարող կատարել: Մեր զգացումքներին հարազատ են հնչում Լոս Անճելոսի "Լրաբեր" շաբաթաթերթի խմբագիր Լուրճի Թապաքեանի խօսքերը, որը նոյնպէս մասնացում էր սփիւռքահայ ներկայացուցիչների ժողովին, "...Սփիւռքի երիտասարդութիւնը որոնումներու մեջ է, կ'ուզէ գտնել իր ինքնութիւնը, կ'ուզէ կառչիլ իր արմատներուն՝ ամուր կանգնելու, հպարտ կանգնելու համար: Եւ ան պատրաստ է զոհաբերութեան, պատրաստ է կրցածը ընելու յանուն սփիւռքի ինքնութեան պահպանման: Հայացքը յառած է հայրենիքին եւ հայրենիքը պետք է իր ուշադրութիւնը սեւեռէ առաջին հերթին երիտասարդութեան վրայ, որը վաղուայ սփիւռքն է, վաղուայ սփիւռքի սիւնը: Եթէ այսօր երիտասարդութիւնը չկարողանանք բերել դէպի հայութիւն, եթէ զինք չկարենանք հետաքրքրել մեզ յուզող հարցերով, ուրեմն վտանգուած է վաղուայ սփիւռքը...": ("հայրենիքի Ձայն", 17 Դեկտ- 1980, թիւ 51 (803):

Այստեղ մենք ուզում ենք անդրադառնալ անելի այն անանդութեանը, որը մեզ տուեց հայրենիքը, եւ որ ապագայում մեզ պիտի օգնի դիմագրաւելու շատ այլեւայլ հարցեր:

Այստեղ ամենից առաջ մենք բոլորս զգացինք որ պատկանում ենք ինչ որ մի ամբողջութեան դա իրականութիւն է՝ ոչ թէ զգացմունք, դա գործ է՝ ոչ թէ խօսք: Հայրենիքը իր գաւակներին տալիս է ուսում, որպէսզի նրանք ապագային անելի կողմնորոշուած լինեն իրենց անհատական թէ հաւաքական կեանքում: Դրա լաւագոյն ապացոյցն էր երեւանում ուսանած, այժմ սփիւռքում պատասխանատու հասարակական պաշտօնների վրայ եղող անձերի ներկայութիւնը՝ սփիւռքահայ

Ներկայացուցիչների ժողովին:

Հայրենիքում՝ զուտ գիտութիւնների կարգին մեզ տրուում են սոցիալական գիտութիւններ, որը մեր մէջ, զարգացնում է մտաւորականի անհարաժեշտ նկարագիրը: Հնարաւորութիւն է տրուում կազմակերպչական գործ վարելու, այդ մարզում փորձառութիւն ձեռք բերելու:

Կապը ցոյց է տրուում ազգային եւ միջազգային յարաբերութիւններին, թէ ինչպէս կարելի է այս երկուքը համադրել հասարակական աշխատանքում:

Մեկտեղում է զանազան տեսակետների եւ միջավայրի ազդեցութիւնները կրած սփիւռքահայ երիտասարդութեան, առիթ է ընծայում մեզ ակտիվ լաւ ճանաչելու միմեանց եւ ակտիվ միաւորուելու:

Այս բոլորի կողքին, տեսնելով մայր հայրենիքի իրականութիւնը, զինուած լինելով անհարժեշտ գիտելիքներով ու անմիջական կապով հայրենիքի հետ, աշխուժացնում է մեզ հետագայում գործօն մասնակցութիւն բերելու ազգային-հասարակական գործունեութեան մէջ, ցուցաբերելով իրատես եւ լայնախոհ մօտեցում:

Հասարակական աշխատանքի առաջին քայլերը միշտ էլ սկսում են ուսանողական շրջանից: Ճիշդ այդ առիթից օգտուելով ահաւասիկ սկսում ենք աշխատանքի, որը համեստաբար ընդունում ենք որ վերջ չունի, որով շատ ու շատ հարցեր կան կանգնած մեր առաջ:

Նախ եւ առաջ ասենք թէ ինչպէս ծագեց գաղափարը: Ուսանողների կողմից միշտ խօսակցութեան նիւթ էին լինում հասարակական կուռ աշխատանքի անհրաժեշտութիւնը, մանաւանդ մշակութային գետնի վրայ, որովհետեւ սփիւռքում տարուելիք հիմնական աշխատանքներից մեկը մշակոյթայինն է:

Տեսնում էինք թէ ինչպէս են գործում հայրենի բուհերում զանազան տեսակի մշակոյթային եւ գիտական խմբակներ, անկախ ուսանողների մասնագիտութիւնից: Ի հարկէ սա առաջացնում էր բարի նախանձ մեր մէջ, ունենալու մեր սեփական խմբակը, որը արտայայտեր մեր հասարակական մտահոգութիւններն ու դիմագիծը:

Այս տարուայ իրադարձութիւնները, Սովետական Հայաստանի 60-ամեակի տօնակատարութիւնը, սփիւռքահայ ներկայացուցիչների ժողովը հայրենիքում, բարերար անդրադարձ ունեցան Երեւանում սովորող սփիւռքահայ ուսանողութեան վրայ, եւ համաժողովում արծարծուած հարցերը խթան հանդիսացան գործի ձեռնարկելու:

Աչքի առաջ ունենալով ՀՍՍՀ գիտութիւնների Ակադեմիայի մեծ դահլիճում մեր ակադ սերնդի այդ պատմական քայլը, մօտեցնելու սփիւռքի եւ հայրենիքի կարիքները, մի քանի սփիւռքահայ ուսանողներով որոշեցինք սկսել Սովսես Խորենացու անուան պատմա-բանասիրական խմբակը, եւ կարծեք բարեբաստիկ զուգադիպուեամք մեր

առաջին միջոցառումը անցկացնում ենք նույն յարկի տակ՝ կրտսեր սերունդի մեր գործնալ ցույց տալու, սկսելու մի նոր ու գեղեցիկ ավանդույթին:

Ընտրելով մեր պատմաօր Մովսես Խորենացու անունը, մեր խոր սերն ու հետաքրքրությունն ենք արտայատուկ մեր պատմության ու մշակույթի նկատմամբ: Ծրագրում ենք ապագայում ներկայացնել զեկուցումներ, անդրադառնալով մեր մշակույթի հետ առնչուող զանազան հարցերին, գրականության, ճարտարապետության, երաժշտության, փիլիսոփայության, եւայլն: Առիթ ենք ընծայելու քննարկումների եւ գրոյցների միջոցով բովանդակալից դարձնել մեր մեջ արտայայտուելու եւ լսելու ունակությունները, մերձեցում ստեղծելու տարբեր երկրներից եկած ուսանողներին միջեւ:

Շնորհալից խոստումներ չենք տալիս: Գործելու ենք ուսանողական շրջանում հնարաւորին սահմաններում, համապատասխան մեր հայրենիքի պատասխանատուների խորհուրդներին, որպէսզի երբ ամէն մէկս վերադառնանք սփիւռք, անվարան ասենք սփիւռքահայ ներկայացուցիչներից մէկի, Փարիզամերձ Իսիլէ Մուլիսօ քաղաքի փոխ-քաղաքապետ Մարտիրոս Զարակոզեանի նման. "Երբ հայրենիք եկայ, շարքային զինուոր մըն էի, բայց մայր հողի վրայ զօրավար դառնալու չափ ուժ ամբարեցի" ("Հայրենիքի Ձայն", 17 Դեկտ, 1980 թ., թիւ 51 (803):

Մովսես Խորենացու անունան պատմաբանասիրական խմբակ

***Այս ծանուցողական յայտարարութիւնը կարդացուեցաւ Մովսես Խորենացիի անունան պատմաբանասիրական խմբակի առաջին միջոցառման սկիզբը 24 Դեկտ. 1980-ին, Երեւան, ՀՍՍՀ գիտութիւններու Ակադեմիայի Գրադարանի դահլիճին մէջ:**

